Խորհրդարանային վեճեր Արցախի հարցի ընթացման շուրջ

Երևան, հուլիսի 9-ին տեղի ունեցավ Հայաստանի Գերագույն խորհրդի երկրորդ նստաշրջանի հերթական նիստը:

Առավոտյան նիստին խորհրդարանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը տեղեկություն տվեց Ճանուցյանի շրջանում տիրող իրավիճակի մասին:

Ապա խորհրդարանը քննարկեց բնության պահպանության օրենքի նախագիծը: Երեկոյան նիստին քննարկվեց Արցախի հարցը:

Ինչպես հայտնի է, նախորդ նիստին, Ի. Մուրադյանի կողմից, այդ հարցով ներկայացվել էր մի նախագիծ, որով պահանջվում էր ճանաչել Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի իրավունքը:

Կար նաև Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկությունը՝ քննարկելու Արցախի ներկայացուցիչների բանակցություններ վարելու հարցը:

59 պատգամավորներ խորհրդարանին ներկայացրին Ի. Մուրադյանի նախագծի հիման վրա պատրաստված «Լեռնային Ղարաբաղում հայ ժողովրդի պայքարը ազգային-ազատագրական պայքար ճանաչելու մասին» փաստաթուղթը, որի պաշտպանությամբ հանդես եկան ՀՀԴ ֆրակցիան, ՍԻՄ, Հանրապետական կուսակցությունը և այլ պատգամավորներ:

Խորհրդարանի Հանրապետական խմբից Շ. Քոչարյանն առաջարկեց քննարկումը հետաձգել, որպեսզի պատեհություն տրվի լրջորեն ուսումնասիրելու նախագիծը, որի մեջ միտումներ կան Հայաստանի քաղաքական կուրսը փոխելու:

Հիշյալ փաստաթուղթը դրվեց քվեարկության և չստացավ անհրաժեշտ ձայների քանակը:

Առաջարկվեց նախագիծը հրապարակել մամուլում, ինչպես նաև Արցախի հարցի քննարկում անցկացնել գալիք շաբաթվա մեջ:

Խորհրդարանը Նախագահությանը հանձնարարեց Բ. Պուզոյի հուլիսի 8-ին կատարած հայտարարության առթիվ հանդես գալ հայտարարությամբ: ■